

itreach

մի Ազգային Առաջնորդարանի
Church of America

Volume X, Number 9
January 1988

ՀԱՒԱՏՔԻ ՕՐ ՄԸ ՔԱՆՉԱՍ ՍԻԹԻԻ ՄԷՉ

Ուրախալի երեւոյթ մըն է Վերջերս տեսնել Ամերիկայի զանազան նահանգներու մէջ Հայ գաղթականներու ի մի հաւաքուելու եւ գաղութային կեանք ստեղծելու արիական ճիգը: Թուով շատ փոքր բայց հաւատքով մեծ, հազիւ 20-30 ընտանիք հաշուող այս գաղութներէն կարելի է յիշել Թալասայի, Աղւանդայի, Ֆորթ Ուլըթի, Լուիզիանայի, Պէթրնտորֆի եւ Մինիապոլիսի գաղութները: Ասոնց վրայ եկած էր աւելնալու, կեդրոնական Ամերիկայի նահանգներէն՝ Քանզաս Սիթիի Հայ գաղութը:

Արդարեւ Նոյեմբեր ամիսը Քանզասցիներու համար եղաւ բեղմնալից ամիս մը: Նոյեմբերի կէսերուն անոնք երկար փնտրութիւններէ ետք կազմեցին միութիւն մը եւ զայն կոչեցին ՔԱՆՉԱՍ ՍԻԹԻԻ ՀԱՅՈՑ ՄԻՈՒԹԻԻՆ: Վարչութեան անդամներն են. —

Չաւէն Հաթութեան	Նախագահ եւ գանձապահ
Մայրլ Ծրանքեան	Փոխ-նախագահ
Արա Չաքարեան	Ատենապետ
Ճէնիֆր Հաթութեան	Քարտուղարուհի
Ճորճ Թերեան	Ընկերային, Թարգմանութեանց պատասխանատու
Ճին Ծրանքեան	Խորհրդական
Էլիզապէթ Չաքարեան	Խորհրդական
Ռոզի Օնպաշեան	Խորհրդական
Ռոզ Եուսէֆի	Խորհրդական

Միութեան կեդրոնատեղիի հասցէն է. —
Armenian Society of Greater Kansas City
107 West 75th Street
Kansas City, MO. 64114
Tel. (913) 491 0511



Սրբազան Հայրը քարոզի պահուն

Ընդառաջելով նորակազմ Միութեան հրաւերին, Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի Հայոց բարեջան Առաջնորդը, Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Սրբազան Արքեպս. Աշճեան, ընկերակցութեամբ կրէնիթ Սիթիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հյոս. եկեղեցւոյ հովիւին՝ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Մանուկեանին, Երկուշաբթի Նոյ. 30, 1987-ին օրային ճամբով հասաւ Քանզաս Սիթի: Օղակայան Սրբազան հօր դիմաւորելու եկած էին Միութեան նախագահն ու ատենապետը, Տիար Չաւէն Հաթութեան եւ Տիար Արա Չաքարեան:

Օղակայանէն դէպի տուն ճամբուն վրայ Սրբազան հօր համար հաճելի անակնկալ եղաւ հանիպիլ տեղւոյն Միութեան կիսովին պատրաստ եղրոնատեղին: Քանզասի հայերը իրենց կազակերպչական կեանքին մէջ քայլ մըն ալ առաջ երսլով, գեղեցիկ գաղափարը ունեցած էին բանալ իրենց կեդրոնատեղին: 75-րդ պողոտայի վրայ, ոչ ատ հեռու Պրն. Արա Չաքարեանի գորգի վաճառանունէն, անոնք գտած էին փոքրիկ տեղ մը եւ սկսած

ՀԱՒԱՏՔԻ ՕՐ ՄԸ ՔԱՆՁԱՍ ՍԻԹԻԻ ՄԷՁ

(Շար. էջ 1-էԳ)

էին կահաւորելու աշխատանքներուն: Ենթի ճակատին անոնք արդէն բարձրացուցած են նշանատախտակ մը, որուն վրայ անգլերէն եւ հայերէն լեզուներով գրած են «ԲԱՆՁԱՍ ՍԻԹԻԻ ՀԱՅՈՑ ՄԻՈՒԹԻԻՆ» գրութիւնը: Գրութեան կեդրոնը գեղեցկապէս նկարուած են Մեծ Մասիսն ու Փոքր Մասիսը: Սրբազան հայրը մեծ յուզումով մուտք գործեց այս փոքրիկ բայց սիրտ տաքցնող կեդրոնէն ներս, գնահատելով կազմակերպիչներու աշխատանքները:

Երեկոյեան ժամը 6:30-ին, Քանդասի հայերը, ըստ նախորոք եղած կարգադրութեան, հաւաքուած էին Յունաց Ս. Աւետում եկեղեցւոյ մէջ, ներկայ ըլլալու համար հայկական Ս. Պատարագին: Պատարագեց եւ քարոզեց Բարձրաշնորհ Սրբազան հայրը, առընդերակառութեամբ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Մանուկեանին: Խորանին սպասարկեց եւ երգեց Տիար Զաւէն Հաթուրեանը: Իսկ պատարագի երգեցողութիւնը յաղոյապէս կատարեցին Քանդասցի Ծ հայուհիներ, ղեկավարութեամբ Տ. Ներսէսին:

Սրբազան հայրը իր ոգեշունչ քարոզին մէջ անդրադարձաւ հայ եկեղեցւոյ առաքելութեան մասին եւ հրաւիրեց ժողովուրդը ապրելու իրենց գաղութային կեանքը Պօղոս Առաքեալի սիրոյ յորդորներու լոյսին տակ: Յուզիչ էր տեսնել ներկաներու հաւատաւոր քայլերով մօտեցումը Ս. Սեղանին եւ հաղորդուիլ Սրբազան Հօր ձեռքով: Շատերու աչքին նկատելի էր կարօտի եւ հաւատքի արցունքները: Պատարագին ներկայ եղան 65 հաւատացեալներ:

Ս. Պատարագէն ետք, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ կոկիկ ճաշկերոյթ մը: Հայ տիկիներ, առաջնորդութեամբ Տիկ. Զարթար Հաթուրեանին, սիրայօժար կերպով իրենց տուններէն բերած էին համադամ կերակուրներ: Ծաշի աւարտին գործադրուեցաւ կարճ յայտագիր մը: Միութեան Ատենապետը, Տիար Արա Զաքարեան բարի զայտեսան ջերմ խօսքերով ողջունեց բոլոր ներկաները եւ ուրախութիւն յայտնեց որ Առաջնորդ Սրբազան հայրը իր բազմազգաղ վիճակին մէջ ժամանակ գտած է խոնարհաբար զարու Քանդաս Միթի եւ քաջալերելու նորակազմ Միութիւնը: Տիար Զաքարեան, գեղեցիկ օրինակներով ժողովուրդը հրաւիրեց միանալու իրար՝ աւելի զօրաւոր կապերով եւ ըլլալու մէկ հայ ընտանիք:

Զաւէն Հաթուրեան, Միութեան Նախագահը, իր մասնաւոր շնորհակալութիւնները յայտնեց Տիկ. Փէդի Զաքարեանին, որուն տքնաջան աշխատանքներու շնորհիւ կարելի էր եղած մարմնին տալ կեդրոնատեղիի գաղափարին: Տեղին է ըսել որ, կեդրոնատեղիի ամսական 500 տոլար վարձը սիրայօժար կերպով յանձն առած են ամէն ամիս վճարել չրջանի յայտնի գորդավաճառներէն, Տէր եւ Տիկին Արա եւ Փէդի Զաքարեանները: Յարգելի նախագահը իր շնորհակալութիւնները յայտնեց նաեւ Ս. Աւետում Յունաց եկեղեցւոյ Հովիւ Արժ. Միլթըն ձիանուլիսին եւ եկեղեցւոյ Խորհուրդին, որունք այդ երեկոյ սիրով իրենց եկեղեցին եւ յարմարութիւնները տրամադրած էին հայութեան:

Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Մանուկեանը, ներկայացնելէ ետք Բարձրաշնորհ Սրբազան հայրը, շնորհակալութիւն յայտնեց Քանդասի հայոց որ իրեն անգամ մը եւս առիթ տուած էին գտնուելու իրենց մէջ եւ բաժնելու նորակազմ Միութեան առաջին ձեռնարկին ուրախութիւնը: Տէր հայրը շնորհաւորեց Միութեան վարչութիւնը որ կրցած էր կարճ ժամանակի մէջ աւելցնել թիւը իրենց անդամներուն:

Բարձրաշնորհ Սրբազան հայրը ժողովուրդի յոտնկայս ծափահարութեանց ներքեւ խօսք առնելով շնորհաւորեց նորակազմ Միութեան աշխատանքները եւ յորդորեց ներկաները հաւատքով նայիլ ապագային եւ միասնական ոգիով շարունակել իրենց գաղութային կեանքը: Սրբազան հայրը վստահեցուց ներկաները որ Ազգային Առաջնորդարանը իր բոլոր կարելիութիւններով միշտ պիտի շարունակէ սատարել Քանդաս Միթիի գաղութին: Սրբազան հօրմէ ետք խօսք առաւ Ս. Աւետում

եկեղեցւոյ Հովիւը, Արժ. Տ. Միլթըն ձիանուլիսը որը անգամ մը եւս ուրախութիւն յայտնեց որ կրցած էր օգտակար ըլլալ հայ համայնքին՝ տրամադրելով իր եկեղեցին բոլոր յարմարութիւններով:

Պանդավառ մթնոլորտի մէջ, Զաւէն Հաթուրեան եւ իր քոյրը Զապէլ Հաթուրեան երգեցին երկու երգեր: Որոնցմէ ետք, Վերապատուելի Ճորճ Թերեան խօսեցաւ ազգային կուռ ճառ մը եւ յանուն Քանդաս Միթիի Հայոց Միութեան Սրբազան հօր ներկայացուց 100 տոլարի չէք մը՝ Լիբանանի հայոց դպրոցներու համար:

Սրբազան հօր պահպանիչով վերջ գտաւ հաւատքի օրը եւ ներկաները գոհ տրամադրութեամբ եւ հայօրէն վերանորոգուած բաժնուեցան սրահէն:

Մեր թղթակցութեան աւարտին կ'ուզենք յիշել նաեւ որ Քանդասի հայերը ունին իրենց նահապետը, յանձինն Տիվրիկցի Թադէոս Շատեանի: Թադէոսը 107 տարեկան է: Ամերիկա եկած է 1908-ին, նպատակ ունենալով մի քանի հնար տոլար շահիլ եւ վերադառնալ իր ծննդավայրը, ամուսնանալ իր սիրած աղջկան հետ եւ մի քանի արտավար հող գնելով շարունակել իր կեանքը մայրենի հողին վրայ: 1915-ի ջարդերուն իր գերդաստանէն զոհ կ'երթան 38 անդամներ: Իր երկու եղբայրները ջարդերէն ճողոպրած կը հաստատուին Ֆրանսայի մէջ: Իսկ Թադէոս, արտաքեկ կը մնայ Քանդաս եւ ի յիշատակ իր սիրած աղջկան, ամբողջ կեանքի ընթացքին կը մնայ ամուրի: Վերջին 20 տարիներուն անկապ կ'ապրի իր եղբոր աղջկան եւ փեսային, Տէր եւ Տիկին Զաւէն եւ Զարթար Հաթուրեաններու բնակարանին մէջ: 107 ամեայ Թադէոս Քանդասի հայոց ազգային ապրումներու ակունքն է:

ԹՂԹԱԿԻՑ

